# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Դերապատիվ և սիրելի
Դերենիկ Սրբազան.

Ձեր զգածված քարոզը, որի բնաբանն է «Ուխտս դի՛ր և կատարեցէ՛ք», հոգուս ուրախություն բերավ և մխիթարեց: Սաղմոսերգուի պահանջած ուխտը Իսրայելի ժողովրդից, որ է ծառայել Եկեղեցուն, Հայրենիքին և հայրենի ժողովրդին, եղել է և Մեր կյանքի նշանաբանը և է այսօր. նա եղել է նաև մեր փառապանծ նախնյաց նշանաբանը, որի համար նոքա պայքարել են, մարմնով մարտիրոսացել, բայց հոգով հաղթանակել ու փառաց պսակի են արժանացել, և (գաղափարական ավանդ թողել հետնորդներին: Ձեր քարոզը հոգեպես մխիթարում է Մեզ, որովհետև Ձեր վկայությունը լսեցինք թե՝ այսօր էլ նոցա ժառանգները՝ Սփյուռքի հայությունը հավատարիմ է Սաղմոսերգուի պահանջած ուխտին և պատրաստ է ծառայելու Հայ Եկեղեցուն, հայ ժողովրդին ու Հայրենիքին, սիրում է Հայ եկեղեցին գլխավորող Ս. Էջմիածինը՝ իր դարավոր պատմական Սրբություն Սրբոցը, սիրում է բնաշխարհի հայ ժողովրդին՝ իր հարազատ արենակից եղբայրներին և իր վերածնված նորափթիթ Հայրենիքը: Ձեր այս քարոզը աներկբայելի հավաստիացում է թե՝ Սփյուռքի հայությունը՝ հավատարիմ իր նախնյաց թողած ուխտին և հավետ կապված Ս. Էջմիածնին ու նորափթիթ Հայրենիքին, որոնք եղել են և են Ազգի անկախ գոյության հիմքն ու պաշտպանը, երբե՛ք ի վիճակի չէ խախտելու իր ուխտը, որքան էլ զորեղ լինի դավադիր որոգայթը:

Գնացե՛ք, տարե՛ք Մեր հայրական և բնաշխարհի հայության եղբայրական ողջույնը, պատմեցե՛ք Ձեր տեսածը Հայաստանում՝ հայրենի երկրի խաղաղ ու հանգիստ կյանքը, նոցա բարգավաճ վիճակը, 30 կարճ տարիների ընթացքում՝ նորա աննավատալի ու աննկարագրելի վերելքը, նորա անմար հույսն ու փափագը՝ օր առաջ տեսնելու Սփյուռքի իր հարազատներին և գրկաբաց ընդունելու իրենց հարկի տակ միասին ապրելու, միասին խորհելու, միասին գործելու և միասին ստեղծագործելու իրենց կուլտուրական և տնտեսական կյանքը:

Իսկ Մենք կմնանք մշտապես աղոթող աշխարհի խաղաղության համար, որովհետև պատերազմը չարիք է և խաղաղությունը բարիք համայն մարդկության և առավելապես հայ ժողովրդի համար, և մաղթող, որ մարդասեր Փրկչի Աջը հովանի և պահապան լինի վտարանդի և անպաշտպան Մեր սիրեցյալ հոտին. ամեն: